

նեին զուարճացեալք առ զաւրավարին Յայոց տեառնն Մամիկոնէից Վահանայ եւ առ միմեանս: 8 Եւ կացեալ անդ աւուրս՝ ապա չունեալ զաւրավարին Յայոց տեառն Մամիկոնէից Վահանայ՝ գայր մտանէր ամենայն Յայոց բազմութեամբն ի բուն ոստանն Յայոց ի Դուին¹, աւրհնելով եւ փառաւորելով զսուրբ Երրորդութեանն զաւրութիւնն:

ՂԸ. Յայնժամ գայ յերկիրս Յայոց մարգպան, որում անուն էր Անդեկան, այր խելացի, մտադիր, իմաստահայեաց, որ գիտէր ճանաչողութեամբ որոշել զիմաստունն յանմտէն եւ զլան ի վատթարէն: 2 Որոյ տեսեալ աւր ըստ աւրէ զաւրավարին² Յայոց զտեառնն Մամիկոնէից Վահանայ զիմաստից զառաջատեսութիւն, զարդարախոհութիւն, զաշխարհահոգութիւն, զքաջութիւն սրտի, զդիպողութիւն պատշաճ յամենայն իրս, ի բնաւի զյառաջադիմութիւն, տեսանէր եւ զայն, թէ յոր գործ եւ յաւժարեցուցանէր զինքն, թեպէտ եւ կարի ի դժուարիւնս՝ Տէր յաջողէր ի ձեռս³ Նորա, եւ ամենայն դիւրաւ վճարի եւ անաշխատութեամբ: 3 Եւ ընդ այսչափ աստուածատուր իմաստուն աջողութիւնս, որ բնակեալ էին ի զաւրավարին Յայոց տեառնն Մամիկոնէից Վահանայ, զամենայն աւր ըստ աւրէ տեսանելով Անդեկանն եւ զմտաւ ածելով՝ զարմանայր ի միտս իւր ի ծածուկ եւ ըստ բարեսէր մտաց իւրոց ուրախանայր:

4 Սիրէր զնոյն Անդեկանն, եւ ի դուռն ամենայն աւագանւոյն դրանն ստեալ եւ իւրոց սիրելեաց զիմաստալից միտսն առնն ծանուցանէր, տայր գիտել եւ թագաւորին Վաղարշու լիով զամենայն: 5 Ճանապարհորդեալ⁴ յաշխարհէս Յայոց եւ ինքն Անդեկանն ի դուռնն՝ զամենայն աջողութիւնս զաւրավարին Յայոց զտեառնն⁵ Մամիկոնէից Վահանայ (խաւսէր)⁶ ընդ թագաւորին Վաղարշու, առաջի ամենայն դրանն աւագանւոյն, յոյժ զարմանալով, թէ «Եւ յամենայն այդպիսի լաւ իմաստունս⁷, զոր իմ առ ձեզ բազում անգամ գրեալ էր եւ այժմ ինձէն ասացի, առաւելապէս եւ աւր քան զաւր լինէր տեսանել աճեցեալ, եւ ոչ փոքր ինչ երբեք Նուագեալ ի Նմանէ զսոյն յառաջադիմութիւն⁸: 6 Յաղագս որոյ համարձակիմ առաջի ձեր ասել յայտնապէս, թէ աւելի՛ ձեզ եւ անդեալ՝ ա՛յլ մարգպան կացուցանել: 7 Քանզի այլ մարգպան որ երթայ յաշխարհն⁹ Յայոց՝ նախ եւ առաջին զայն խրատ չունի՝ զոր այրն

1 ՁԱտ. ոստանն ի Դուին (Ատ. ի դւին) հայոց

2 Ձ. ըզօրավարն

3 ՏՏ. ի ձեռն

4 ՏՏ. ծանուցանէր: Տայր գիտել եւ թագաւորին Վաղարշու լիով զամենայն, ճանապարհորդ...

5 ՏՏ. տեառնն

6 ՁՏՏ. չիք (խօսէր)

7 ԹԵՐԵՆՍ՝ իմաստս

8 ՏՏ. ի սոյն յառաջադիմութիւն

9 ՏՏ. ի յաշխարհն